

# MELKONIAN ED. INSTITUTE FOR SYRIAN-ARMENIAN STUDENTS

*Posted on January 19, 2014 by Keghart*



## COMMUNIQUE

Appeal – Open Letter to the  
Armenian General Benevolent Union  
Central Board

Category: [Opinions](#)





For the Armenian text [click here](#)

January 19, 2014

Berj Setrakian, Esq., President Honorable Members  
A.G.B.U. Central Board  
New York

Dear Mr. Setrakian:

With this Appeal – Open Letter we appeal to you to reopen The Melkonian Educational Institute, especially for Armenian students from Syria.

As you are aware, a terrible civil war has been taking place in Syria for the last 3 years. Factions from all sides are shooting and bombing each other without distinction. Armenians living in Aleppo, Damascus, Kamishly, Kessab, and other regions of Syria are falling victims to this terrible situation. Surly, you are privy to more detailed accounts of the devastation and slayings that Armenians in Syria, namely Armenian youth, are suffering. Armenian schools remain partially open, but are in constant danger of attacks. Thousands of Syrian-Armenians have been forced to leave their homes and seek residence in Armenia and Artsakh, Jordan, Lebanon, or elsewhere.



For the Armenian text [click here](#)

January 19, 2014

Berj Setrakian, Esq., President Honorable Members  
A.G.B.U. Central Board  
New York

Dear Mr. Setrakian:

With this Appeal – Open Letter we appeal to you to reopen The Melkonian Educational Institute, especially for Armenian students from Syria.

As you are aware, a terrible civil war has been taking place in Syria for the last 3 years. Factions from all sides are shooting and bombing each other without distinction. Armenians living in Aleppo, Damascus, Kamishly, Kessab, and other regions of Syria are falling victims to this terrible situation. Surly, you are privy to more detailed accounts of the devastation and slayings that Armenians in Syria, namely Armenian youth, are suffering. Armenian schools remain partially open, but are in constant danger of attacks. Thousands of Syrian-Armenians have been forced to leave their homes and seek residence in Armenia and Artsakh, Jordan, Lebanon, or elsewhere.

Today, the Armenian youth who attend schools in Syria live in constant fear and anxiety of getting killed. They are also exposed to the other psychological and emotional traumas of living through war. There is no safety, and living conditions are unbearable. In parts of Aleppo, food and water are scarce. It is crucial, that we act now to lend a helping hand and move these youth to safety.

In light of the horrific and volatile state of Syrian affairs, we urge The Honorable Central Board to retract its decision to close the Melkonian Institute, particularly since this motion would free Armenian students from their daily struggles in Syria. We believe that financial considerations run secondary to the need to execute this philanthropic initiative. For the past eight years after the closure of the Melkonian Institute, the accumulated funds to the Benefactors' huge Bequest have significantly multiplied due to income generated by commercial structures built on Melkonian property. Also, because these students are technically refugees, various international organizations, the United Nations, American Red Cross, and others would be willing to assist. We are sure that your legal and public relations advisors could find the financial means necessary to reopen the Melkonian Institute.

The reestablishment of the Melkonian Institute would provide a safe haven in which approximately 1000 students would receive a high-quality education right away. In addition, it will build upon Melkonian's mission as a major center for educating Armenian youth and preventing the loss of the western Armenian dialect. This should be at the forefront of A.G.B.U's objectives. No other Armenian organization, not even the Armenian Church, can accomplish this mission.

Considering the severity and seriousness of the above-mentioned set of circumstances, we formally propose that you withdraw your decision to close The Melkonian Educational Institute, and reopen it without delay. While A.G.B.U's ongoing efforts to help Syrian Armenians are widely appreciated, we believe the venture to reopen The Melkonian Institute will offer invaluable benefits to this community of Armenians and inevitably build upon the merits of the A.G.B.U's organization.

We also propose that the humanitarian aid being provided by A.G.B.U. to Armenia be primarily allocated to the cause of Armenian refugees from Syria, who are settling in Armenia and Artsakh.

We trust that your consideration of this plight will be fueled by benevolence and logicity.

Thanking you in advance,

A group of Melkonian Graduates

**Note:** All those Armenians who are in agreement to reopen the Melkonian Educational Institute mainly for the Syrian-Armenian students, please complete and sign the provided e-mail form and send it to the assigned e-mail address.

Visit [Melkonian Forever](#) Main Page and send your support by e-mail [Admin@melkonianforever.org](mailto:Admin@melkonianforever.org) or via [Feedback](#).

Thank You



**Կոչ - Բաց Նամակ  
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն  
Պատկառելի Կեդրոնական Վարչություն**

Յունուար 19, 2014

Պրն. Պերճ Սեդրակեան, նախագահ,  
Պատուարժան Անդամներ  
Հ.Բ.Ը.Միություն Կեդրոնական Վարչություն,  
Նիւ Եորք

Մեծայարգ Պրն. Սեդրակեան,

Այս կոչ - բաց նամակով կը դիմենք ձեզի վերաբանալու Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը մասնաւորաբար Սուրիահայ աշակերտներու համար:

Ինչպէս ծանօթ է ձեզի, վերջին շուրջ երեք տարիներուն Սուրիան կը գտնուի քաղաքացիական ահաւոր պատերազմի մէջ: Բոլոր կողմերը, առանց խտրականութեան կը կրակեն եւ կը ռմբակոծեն զիրար: Այս ահաւոր վիճակին անմեղ զոհերէն են Հալէպի, Դամասկոսի, Քամիշլիի, Քեսապի եւ այլ շրջաններու Սուրիահայութիւնը: Վստահաբար Ձեզի շատ աւելի մանրամասն լուրեր կը հասնին Սուրիայէն, հայերու կրած ծանր կորուստներուն եւ սպաննութիւններուն մասին: Բազմաթիւ հայ մանուկներ եւ պատանիներ զոհ կ'երթան ռմբակոծումներու կամ փամփուշտներու: Հայկական վարժարանները մասամբ կը գործեն, սակայն որեւէ վայրկեան կրնան ռմբակոծուիլ: Բազմահազար հայեր ստիպուած հեռացած են իրենց բնակարաններէն, հայկական թաղերէն եւ Սուրիայէն: Ոմանք հաստատուած են Հայաստան եւ Արցախ, ուրիշներ Յորդանան, Լիբանան կամ այլուր:

Սուրիահայ աշակերտները, մանուկներն ու պատանիները այսօր կ'ապրին ոչ միայն որեւէ վայրկեան սպաննուելու սարսափը, այլ նաեւ կ'ենթարկուին հոգեկան ահաւոր ցնցումներու: Ապահովութիւն չկայ: Կեանքի պայմանները գրեթէ անտանելի են: Գիտենք որ Հալէպի կարգ մը շրջաններու մէջ շատ դժուար է ուտեստեղէն եւ խմելիք ջուր գտնելը: Անհրաժեշտ է անյապաղ փրկութեան ձեռք երկարել մեր Սուրիահայ պատանիներուն, անոնց կեանքերը փրկելու զանոնք փոխադրելով ապահով միջավայր:

Այս ահաւոր, անապահով կացութեան դիմաց, շատ տրամաբանական պիտի ըլլար ակնկալել որ Պատուարժան Վարչութիւնդ վերատեսութեան ենթարկէր Մելգոնեանը փակելու որոշումը եւ անյապաղ վերաբանար Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, գլխաւորաբար Սուրիահայ աշակերտներուն համար: Վստահ ենք որ նիւթական պատճառները արգելք չեն այս ակնկալութեան: Մելգոնեանի փակումէն ետք, ուր տարիներու ընթացքին Բարերարներու Կտակէն կուտակուած եկամուտներու հսկայ գումարին վրայ կ'աւելնան նաեւ Մելգոնեանի հողին վրայ կառուցուած

Եզրաստաբեր շէնքէն ապահովուած մեծ գումարները: Առաւել, քանի որ այդ աշակերտները գաղթականներ են, միջազգային զանազան կազմակերպութիւններ, ինչպէս ՄԱԿը, Կարմիր Խաչը, Եւայլն, մեծապէս կը նպաստեն գաղթական աշակերտներու զանազան ծախսերուն: Վստահ ենք որ ձեր իրաւագետներն ու հանրային յարաբերութեանց պատասխանատուները կրնան միջոցները գտնել Մելգոնեանը վերաբանալու եւ եկամուտի միջազգային աղբիւրները գտնելու եւ օգտագործելու:

Մելգոնեանը իր ներկայ վիճակով կրնայ շուրջ հազար աշակերտներու ապահով ապաստանարան տալ եւ որակաւոր ուսում ջամբել: Առաւել, կը վերահաստատուի Մելգոնեանի առաքելութիւնը որպէս դարբնոց հայեցի դաստիարակութեան եւ արեւմտահայերէն լեզուի պահապանման: Այս մարտահրաւերը պէտք է ըլլայ Հ.Բ.Ը.Միութեան առաջնահերթ ձեռնարկը: Ուրիշ ոչ մէկ հայկական կազմակերպութիւն կամ միութիւն, նոյնիսկ Եկեղեցին չեն կրնար այս առաքելութիւնը իրագործել:

Վերոյիշեալ ծանր եւ լուրջ պատճառները նկատի ունենալով, պաշտօնապէս կ'առաջարկենք որ վերատեսութեան ենթարկելով ձեր Մելգոնեանը փակելու որոշումը, անյապաղ վերաբանաք Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Որքան ալ որ գնահատելի է Սուրիահայութեան կարիքներուն յատկացուցած Միութեանդ մեծագումար օժանդակութիւնը, բայց եւ այնպէս Մելգոնեանի վերաբացումով շատ աւելի հիմնական ու անգնահատելի բարիք մը գործած կ'ըլլաք Սուրիահայութեան, եւ մեծապէս կը նպաստէք Հ.Բ.Ը. Միութեան վարկին հզօրացման:

Կ'առաջարկենք նաեւ որ Հայաստանի յատկացուելիք Բարեգործականի գումարները առաւելաբար տրամադրուին Հայաստան եւ Արցախ հաստատուած Սուրիահայ գաղթականներու կարիքներուն: Այսպէսով թէ Հայաստանը եւ թէ Սուրիահայ գաղթականները կ'օգտուին: Կը վստահինք ձեր ազգասիրական ու բարեսիրական զգացումներուն եւ բարձր տրամաբանութեան:

Կանխայայտ Շնորհակալութեամբ`

Խումբ մը Մելգոնեանցի Շրջանաւարտներ

**Ծանօթ:** Կոչ կ'ուղղենք բոլոր այն հայորդիներուն որոնք համաձայն են Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբանալու գլխաւորաբար Սուրիահայ աշակերտներու համար, հաճին ամբողջացնել Էլէքթրոնիք ստորագրութեան պատճէնը եւ զայն դրկել համապատասխան հասցէին:

Այցելել [Melkonian Forever](http://MelkonianForever) գլխաւոր էջը եւ ապա **Email** Admin@melkonianforever.org կամ **Feedback** ամբողջացնել:

Փափաքելի պիտի ըլլար նաեւ որ ձեր կարծիքները յայտնէիք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան, Էլէքթրոնիք կամ պարզ նամակներով, կամ մամուլի միջոցաւ:

Շնորհակալութիւն



